ՃԸ.

Սա [գաղատացի Ստեփանն] փափաքի քահանայ լինիլ. վրդանէս եպիսկոպոսն յառաջադրեալ էր ոչ ոք օրհնել այսուհետև պատճառելով զծերութիւնն իւր, վասն յաժմոյս նոյն ըստէփանն ըստէփանոս վարդապետէ դաս առնէ առ ի պատրաստիլ քննութեան։ Լվայ թէ հալէփցի տէր Նիկողայոսն տեղդ եկեալ է և անդ աւել պակաս խօսի վասն իւր պատրիարգին[1]. ոչ ոք չի հաւատայ բանից նորին, զի ամենեքեան սուտ և զրպարտութիւնք են. աստուած դորա լոյս տայ. մօտերս գիր եկաւ պատրիարգէն, փափին սուրբ ժողովքին և ոմանց կարտինալաց. անունն յոյժ բարի և հաճելի է առաջի մեծաւորաց. միայն ասիմանն և եղբոր տղան ներհակ են իւրեան։ (Ցովհաննէս պատկերահան առ Միխիթար, յամին 1744 դեկտ. 9. [Հռոմ])։

ՃԳ.

Աստէն Ֆռէնկ քահանայք ի մերձակայ գիւղս բնակօղք, նաև Ֆռանչիսկանք, և ես ձէզուիթք հրաւիրեն զիս երբեմն երբեմն ի մեծ տօն աւուրս զլատիներէն ձայնաւոր պատարագ ասել յեկեղեցիս իւրեանց, որովհետև գիտեմ (ասեն) զլեզուն լատինական։ Վասն որոյ... աղաչեմ, զի եթէ գրիցէք վասն երկիցս պատարագելոյն, զայս ևս առակցիցէք. քանզի նաև Կղեմէս և Վիլլօթ ի Հայաստան բազմիցս հայերէն ասէին զպատարագ...։ Ցետ այսորիկ ծանիք, զի իբրև եհաս գիրն գերյարգելութեանդ ի ձեռս իմ, և ընթերցայ՝ իսկոյն որոնեցի զտաղարանս իմ, և երէկ օրինակեցի զերգն Երանելոյն Տէր Կոմիտասին։ Ասեն թէ այրն[2] թագուհւոյն ի 25 սոյն ամսոյս պսակելոց է ի կայսր։ Բայց մաճարք ոչ կամին ճանաչել զնա՝ նաև իբրև զթագաւոր աւստրիոյ, պօհէմիոյ, և մաճարաց, այլ միայն զթագուհին մինչև ցարբունս Ցովսէփին որդւոյն իւրեանց։ Նաև թէ որդին որ այսուհետև ծնցի ի կայսերէն՝ մի ունիցի զառաւելութիւն ինչ իշխելոյ յայսոսիկ երկիրս։ Եւ ևս, զի կայսրն ոչ օգնեսցէ նոցա, յորժամ տաճիկն յարիցէ ի վերայ նոցա. որպէս նաև նոքա ոչ օգնեսցեն նմա ի բարձրագոյն երկիրս կայսերութեան։ (Հ. Թէոդորոս Մէտիաշցի առ Միխիթար, յամին 1745 յուլիսի 24. ի շանցն Բեդրօվարատինոյ)։

ՃԴ.

Անցեալ շաբաթն փափին[3] հրամանաւն չորս կարտինալք ժողով արարին վասն տեղս եղեալ միսիոնարաց խնդրեալ բանիցն համար. ետ քանի աւուր սոցայ ասին թէ ահա սուրբ Հայրապետն չնորհեաց ըստ խնդրոյ ձերում, վասն որոյ պատրաստութիւն տեսէք, երբ տէքրէթն կատարի ճանապարհօրդ լինիք. և սոքայ ի վերայ այս բանին մեծ ուրախութիւնս արարին...։ Զայն զօր այլ ճանապարհաւ լսեցի է այս, թէ ըստամպօլ եղեալ լաթին միսիոնարքն ոչ ոք իշխանութիւնս ունեսցին ի վերայ Հայոց, խոստովանութիւն սրբութիւն տալու. եթէ պատահիցի թէ ոմն Հայ ի կէտ մահվան կամիցի խոստովանիլ պատրոյ, այս լինիցի ներկայութեամբ Հայ միսիոնարի. և թէ Հայ միսիոնարքն կարող լինին ի յեկեղեցիսն պատրոց քարոզ և պատարագս ասել, խոստովանանք լսել և այլն. եկեղեցի խնդրելն ասլ չունի։ (Ցովհաննէս պատկերահան առ Միխիթար, յամին 1745 օգոստոսի 7. [Հռոմ])։

---

1. Աբր. Պետրոս Ա.։
2. Փրանկիսկոս–Ստեփանոս Լոռէնայ։
3. Բենեդ. ԺԴ.։